



ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԸ ՄԱՅՐ ԱԹՈՒՈՒՄ

Ծառ դարեր առաջ, երբ հայ ժողովուրդը քրիստոնեական ճշմարիտ հավատքով կերտում էր իր ապագան, երբ Հայաստան աշխարհը գրեթե գյուտով իր Ոսկեդարի սկիզբն էր դնում, պարսից երկու հարյուր հազարանոց ահարկու բանակը, մահ ու սարսափ սփռելով, ներխուժում է Հայոց երկիրը: Հայ ժողովուրդը հավաքվելով Վարդան Մամիկոնյանի դրոշի տակ, կենաց և մահու ճակատամարտի է դուրս գալիս իր ազատությանն ու ինքնությանը սպառնացող բռնատիրության դեմ: Վարդանանց հերոսամարտը քրիստոնեության պատմության այն եզակի դեպքերից է, երբ մի ողջ ժողովուրդ նահատակության պսակն է հանձն առնում՝ «վասն հաւատոյ և վասն հայրենեաց»:

Ահավասիկ, 1540 երկար ու ձիգ տարիներ են անցել Վարդանանց գոյամարտից, սակայն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին և համայն հայությունը ոգեկոչում է այս տոնը՝ որպես իր հարատևության և ինքնահաստատման առհավատչյա:

Ամեն տարի, Վարդանանց հիշատակի օրը, Ս. Էջմիածնի Մայր տաճարը լեցուն է հայ հավատացյալների և ուխտավորների խոռոներամ բազմությամբ:

Այդ օրը միաժամանակ նշվում է նաև Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ի անվանակոչությունը:

Այս տարի ևս, փետրվարի 7-ին, Մայր Աթոռում մեծ շուքով ու հանդիսավորությամբ նշվեցին այդ զույգ տոները:

Օրվա մեծ տոնի առիթով, առավոտյան հանդիսավոր ժամերգությունից հետո, Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի չորրորդ լսարանի վեց սաների շնորհվեց ուրար կրելու իրավունք:

Առավոտյան ժամը 11-ին Մայր տաճարում, Ավագ ա. խորանի վրա, սկսվեց ա. պատարագ: Պատարագիչն էր Տ. Շնորհք վրդ. Բաղդասարյանը: Եկեղեցական հանդիսավոր թափորով Մայր տաճար իջավ Ամենայն Հայոց Հայրապետը:

«Հայր մեր»-ից առաջ, համազգային այս մեծի տոնի կապակցությամբ, Ծիրակի թեմի առաջնորդ գերշ. Տ. Գրիգորիս եպս. Բունիաթյանը ընթերցեց Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի սրբատառ կոնդակը:

Նույն օրը, ժամը 13-ին, Վեհաքանի հանդիսությունների դահլիճում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, տեղի ունեցավ Ավարայրի հերոսների հիշատակի ոգեկոչմանը նվիրված հանդիսություն:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, Ծիրակի, Արցախի, Սյունիքի, Արարատյան և Վիրահայոց թեմերի առաջնորդ սրբազան հայրերը, հոգևորականներ, Մայրավանքի պաշտոնեությունն ու աշխատավորները, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը, հայրենի մտավորականության ներկայացուցիչներ, հավատացյալներ և հյուրեր:

Հանդիսությանը ներկա էին Հայաստանի Հանրապետության Նախարարաց խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նորընտիր նախագահ պրն. Լյուդվիգ Խաչատրյանը, Հայաստանի արտաքին տնտեսական հարաբերությունների նախարար պրն. Եսայի Տեր-Ստեփանյանը:

Հանդիսությունը սկսվեց խմբովին արտասանված «Հայր մեր»-ով: Տոնակատարության բացման խոսքով հանդես եկավ հոգևոր ճեմարանի ուսումնական բաժնի վարիչ պրն. Գևորգ Բաղդիշյանը: Նա իր ոգեշունչ խոսքում վեր հանեց Վարդանանց հերոսամարտի ոգեկանությունը, նրա դերն ու նշանակությունը հայ իրականության մեջ:

Ապա հոգևոր ճեմարանի երգչախմբի կատարմամբ հնչեց Ս. Ներսես Ծնորհալու «Նորահրաշ» հոգեհույզ շարականը:

Այնուհետև օրվա խորհրդի շուրջ բովանդակալից բանախոսությամբ հանդես եկավ հոգևոր ճեմարանի դասախոս պրն. Վահան Տեր-Ղևոնդյանը:

«Այսօր, փետրվարյան այս ցրտաշունչ օրը, հայ ժողովուրդը ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, նշում է իր ամենասրտամոտ ու սիրելի տոներից մեկը՝ Վարդանանց տոնը:

Այս տարվա հանդիսությունները հավանաբար շատ բանով կերկնեն այլ տարիների տոնակատարությունները: Սակայն, դրա հետ մեկտեղ, Վարդանանց նահատակների 1991 թվականի ոգեկոչումը առանձնանում է նախորդներից: Այն, վերջին տասնամյակներում առաջին անգամ, նշվում է համազգային, համապետական ընդգրկումով:

Մեր ազգի հազարամյա պատմության մեջ չկա մի դարաշրջան, որն ինչպես կա՛մ այն չափով, այս կամ այն տեսակետից չհիշեցնի մեզ Ե դարի Հայոց պատերազմը, չվերադարձնի մեզ դեպի այն պայքարը, որը փաստորեն մեր ողջ պատմության խտացումն ու խորհրդանիշը հանդիսացավ: Մի պայքար, որի առաջամարտիկները՝ Ղևոնդյանք ու Վարդանանք, նահատակվելով դարձան մի ջահ, որը լուսավորեց հայորդիների մղած հետագա բոլոր բախտորոշ ճակատամարտերը, ոչ միայն ռազմի դաշտում, այլև բոլոր ասպարեզներում:

Ե դար, Տիրոջ ծննդյան 451 թվական, 26-րդ օրը մայիսի, Ծավարշանի դաշտը Տղմուտ գետի ափին, Ավարայրից ոչ հեռու: Դեմ-դիմաց կանգնած են երկու բանակներ՝ մի կողմում հայոց փառապանծ այրուձին ու հետևակ զորքը, մյուս կողմում՝ պարսից եռակի գերազանց ուժերը, ի թիվս որոնց և դավաճան հայոց գունդը և ահարկու փղերը և Սասանյան տերության ողջ զորությունը:

Սակայն մինչ այդ վճռական պահը, Հայաստանը, ինչպես և հարևան Վիրքն ու Աղվանքը անցել էին մոտ մեկ տարվա անհանգիստ, փոթորկուն իրադարձությունների միջով:

Չնայած այն բանին, որ արդեն ավելի քան երկու տասնամյակ թափուր էր հայոց գահը, սակայն կանգուն էին երկու խորապես ազգային և հզոր կառույցներ՝ նախարարական կարգը և հայոց Եկեղեցին: Այս երկու սյուների վրա էր հենվում ազգի ուժը, դրանք էին ապահովում Հայաստանի ներքին ինքնավարությունը, այդ ուժերն էին հանդիսանում երաշխիքը ապագա անկախ պետականության:

Եվ ահա Սասանյան դաժան տիրակալ Հազկերտ Բ-ը Ե դարի կեսերին կտրուկ քայլերի է դիմում՝ նպատակ ունենալով դավաճափոխ անել իր կայսրության սահմաններում բնակվող քրիստոնյաներին և առաջին հերթին հայերին, քանզի Հայաստանը կրոնափոխ անելուց հետո շատ ավելի հեշտ կլինեին մյուսների դիմադրությունը կոտրելը:

Այս քաղաքականության իրագործման ճանապարհին առաջին քայլը պարսից հազարապետ Միհրներսեսի նամակն էր հավատափոխության պահանջով, որին Արտաշատում հավաքված հայոց մեծամեծների ժողովը պատասխանում է վճռական մերժումով:

Ապա ստացվում է Հազկերտի հրովարտակը: Հայ նախարարները ներկայանում են Պարսից մայրաքաղաք՝ Տիգրն: Ատերես ուրացությանը նախորդում է նախարարների գաղտնի երդումը՝ հայրենիք վերադառնալուն պես ապստամբելու «վասն հաւատոյ և վասն հայրենեաց»:

Դեռ նախքան նախարարների վերադարձը արդեն բռնկվում է ժողովրդական ցատումը Ղևոնդ երեցի և այլ նվիրյալ հոգևորականների առաջնորդությամբ:

Այս երևույթը շատ հատկանշական է և բնորոշում է հայ ազգի էության մի կարևոր հատկանիշը: Արշակունյաց հարստության անկումը, Հայաստանի վերածումն պարսից մարգպանության, ոչնչացման նպատակով հայոց այրուձիի օգտագործումը հոների և քուշանների դեմ, հալածանքները նախարարների հանդեպ, ծանր հարկերն ու կեղեքումները. այս ամենը հավասարակշռությունից չի հանում ժողովրդին. մարդիկ դիմանում էին լուր զսպվածությամբ ու սեղմված ատամներով, սակայն, երբ թշնամին իր բիրտ ձեռքը բարձրացրեց եկեղեցու և հավատի վրա, ժողովուրդն այլևս չհամքերեց և ժայթքեց հրաբուխը: Այս ու այնտեղ սկսվեցին բախումները: Տեղի բերեց և ժայթքեց հրաբուխը: Այս ու այնտեղ սկսվեցին բախումները: Տեղի բերեց և ժայթքեց հրաբուխը, որտեղ զայրացած բազմությունը կոտորեց մոռնեցան Անգղի դեպքերը, որտեղ զայրացած բազմությունը կոտորեց մոգերին և պարսիկ զորքին, քանդեց ատրուշանները:

Հայ նախարարների մեծ մասը հավատարիմ մնաց իր երդմանը: Հայրենիք վերադառնալուն պես նրանք ժողովրդական տարերային շարժմանը կազմակերպված բնույթ տվեցին և կանգնեցին ապստամբության գլուխ: Սակայն ապստամբությանը մեծ վնաս հասցրեց մարգպան Վասակ Սյունու, նախ և առաջին հերթին, ապա նաև բացահայտ դավաճանական դիրքորոշումը: Նա կարողացավ այնպես անել, որ Հայաստանի մի ամբողջ շարք նախնային ու գաղափարներ հեռու մնացին շարժումից և ապաստողական դիրք գրավեցին: Նախարարների մի մասն էլ թեկուզ հարում էին ապստամբությանը, սակայն իրենց ողջ հույսը դրել էին Բյուզանդիայի օգնության վրա: Վերջինս ոչ միայն չօգնեց հավատակիցներին, այլև իր չեզոքության մասին շտապեց հավաստիացնել Սասանյաններին: Այս հանգամանքը ոմանց հուսահատեցրեց:

Սակայն ապարապետ Վարդան Մամիկոնյանը և ապստամբության մյուս ղեկավարները գտնում էին, որ ստեղծված իրավիճակում հույսը միայն

իրենց վրա կարող են դնել և գործել որքան կարելի է արագ, քանի դեռ թշնամին նախահարձակ չէր եղել:

Եվ ահա Վարդան Մամիկոնյանն իր գործով շարժվում է դեպի Մեծ Հայքի հյուսիս-արևելք, դեպի Աղստևի հովիտ: Այստեղ, Խաղխաղի մոտ, նա փայլուն հաղթանակ է տանում պարսկական մի զորաբանակի նկատմամբ, որը գլխավորում էր Սեբուխտ Նիխորականը: Ապա անցնում է Կուր գետը, մտնում Աղվանք, այստեղ ևս ջախջախելով պարսիկներին, առաջ ընթանում մինչև Ճորա Պահակ և հակառակորդների դաշինք կնքում Հոների հետ:

Հաղթողի փառքով վերադառնալով Հայաստան, հայոց սպարապետը վերականգնում է գործակալությունները, կազմում կառավարություն Արշակունյաց օրինակով: Այսպիսով, չնայած անհանգիստ իրավիճակին, 450—451 թվականների ձմռանը Հայաստանը լիովին անկախ մի երկիր էր:

Բացվում է գարունը, պարսիկներն իրենց հիմնական զինված ուժերը տեղափոխում են Հայաստանի հարավային Հեր և Զարևանդ գավառները և այստեղից պարսկական հսկա բանակը Մուշկան Նիսալավորտ զորավարի գլխավորությամբ մուտք է գործում Մեծ Հայքի սիրտը՝ Այրարատ նահանգը:

Մեկ տարվա այս խռովահույզ դեպքերն արդեն ետևում էին մնացել: Ավարայրի մոտ պարսկական բանակին դեմ-հանդիման կանգնած հայորդու՝ նախարարի և քահանայի, զինվորի ու շինականի համար այդ ամենն անցյալ էր: Իսկ հիմա նրանք, պրկված ու համակ նվիրում դարձած, անվեհեր նայում էին հեթանոսների բազմությանը: Յուրաքանչյուր ապստամբի ականջներում, ամպրոպին նախորդող լուռության մեջ, հնչում էր պաշտելի զորավարի դեռ Արտաշատում ասած խոսքը.

«Արդ աղաչեմ զձեզ, ով քաջ նիզակակիցք իմ, մանաւանդ զի բազումք ի ձեզն լաւագոյնք էք քան զիս արութեամբ, եւ գահու ի վեր ըստ հայրենի պատուոյն, բայց յորժամ ձերով կամօք եւ յօժարութեամբ առաջնորդ և զօրագլուխ ձեզ կացուցէք, հեշտ և բաղձալի թուեցին քանք իմ ի լսելիս մեծամեծաց և փոքունք: Մի երկուցեալ զանգիտեցուք ի բազմութենէ հեթանոսացն, եւ մի յահագին սրոյ առն մահկանացուի զթիկունս դարձուցուք. զի եթէ տացէ Տէր յաղթութիւն ի ձեռս մեր, սատակեցուք զզօրութիւն նոցա, զի բարձրացի կողմն ճշմարտութեանն. եւ եթէ հասեալ իցէ ժամանակ կենաց մերոց սուրբ մահուամբ պատերազմիս, ընկալցուք խնդրութեամբ սրտիւ. բայց միայն յարութիւնս քաջութեան՝ վատութիւն մի խառնեցուք»:

Եվ հայ զորականները արիության և քաջության մեջ վախկոտություն չխառնեցին, այլ կովեցին այնքան, մինչև ընկան սուրը ձեռքին, իրենց հետ էլ թշնամու զորքից շատերին տանելով, և իրենց ազնիվ արյամբ ոռոգեցին հայրենի հողը, այն հողը, որից, շատ չանցած, պիտի ծնվեին Վահանյանց հերոսները, ապա Կարմիր Վարդանի քաջերը, ապա Մուշեղ Մամիկոնյանի ապստամբները, Վահրամ Պահլավունու զինվորները, Դավիթ Բեկի ու Ավան Հարյուրապետի արիները, որոնք դարերի ընթացքին, պայքարելով մերթ պարսիկի ու բյուզանդացու, մերթ հագարացու ու թուրքի դեմ, պիտի վառ պահեին Վարդանանց ոգին, իր կյանքը զոհող, բայց դրանով մի ողջ ազգ ապրեցնող ոգին:

Լույսի ու հավատի այդ կրակն էր ոգեշնչում և մեր պատմության նոր Ավարայրը կերտողներին: 1918 թվականի մայիսին ևս, Սարդարապատի դաշտում, խաչի ու սրի միասնությունը դարձավ մեր հաղթանակի առհա-

վատչյան, մի հաղթանակ, որ ծնունդ տվեց մեր նոր պետականության՝ Հայաստանի Հանրապետության:

Իբրև ազգային գաղափարների շարունակականության ապացույց, տեղին է հիշել նույն այդ հանրապետության կերտողներից մեկի, մեր գրականության նշանավոր դասականի՝ Լևոն Շանթի բառերը, որոնք կարծես բխած լինեն Վարդանի ու նրա անմահ քաջագունների ոգուց. «...Այո, կրնայ պատահիլ: Կոռի մէջ նետուողը ե՛ւ կը վիրաւորուի, ե՛ւ կրնայ մեռնիլ: Բայց մեռնելէն վախցող ժողովուրդը ոչ կրնայ ապրիլ ու դիմանալ, ոչ ալ իրաւունք ունի ապրելու, իբրեւ ուրոյն գոյութիւն, իբրեւ ջոկ անհատականութիւն: **Եւ իր վախովն ալ չազատիր մեռնելէ**, միայն կը մեռնի, քաշքշուելով, հիւծելով, արհամարհուելով ու ոտքի տակ երթալով»:

Ավարայրի ճակատամարտից հետո պարսկական պատժիչ զորաբանակը տարածվեց Հայաստանի գավառներում՝ հետապնդելով զինված ապրտամբների, որոնք, հատկապես լեռնային շրջաններում, համառորեն շարունակում էին պայքարը:

Ապստամբության ողջ մնացած ղեկավարները գերվեցին ու տարվեցին Տիգրոն: Չնայած այս ամենին, Հազկերտ Բ-ը ստիպված էր հրաժարվել հայերին և մյուս քրիստոնյաներին հավատափոխ անելու ծրագրից: Ապրտամբությունը, թեկուզ և ծանր գնով, հասել էր իր նպատակին: Կանգուն ու անասան էր Հայոց Եկեղեցին, Հայաստանը վերստացել էր իր ներքին ինքնավարությունը:

Սակայն դեռ գերության մեջ էին Ղևոնդյանք: Ավելի ծանր ու տանջալից եղավ նրանց վախճանը: Երեք տարվա աքսորից հետո, 454 թվականի հուլիսին, Պարսկաստանի խորքերում, երկու տարբեր խմբերով, հայ հոգևորականները սպանվեցին ու մարտիրոսացան, ենթարկվելով անլուր տանջանքների: Նրանք անսահման արիությամբ և ոգու ամրությամբ ընդունեցին մահը: Սրանց մեջ էին Հովսեփ կաթողիկոսը, Ղևոնդ երեցը, Սահակ և Թաթիկ եպիսկոպոսները, Մուշեղ, Արսեն, Եղիշե և Սամուել քահանաները, Քաջաջ և Աբրահամ սարկավագները:

Մի պահ խորհենք, թե որն է Վարդանանց ու Ղևոնդյանց պայքարի և նահատակության խորհուրդը, ինչ դասեր մենք կարող ենք քաղել մեր նախնյաց փորձից:

Խորհուրդներից մեկն այն է, որ չէին լինի Վարդանանք, չէր լինի Եդարի հայոց գոյամարտը, եթե չլիներ այն սերունդը, որի հոգում սկսել էր ճառագել Սահակ-Մեսրոպյան դպրոցի վառած լույսը, որն էլ իր հերթին ամուր կանգնած էր մեկուկեսդարյա հավատի հիմքի վրա:

Քրիստոնեության ընդունում և գրերի գյուտ: Ահա թե ինչ իրադարձություններ նախորդեցին և պայմանավորեցին Վարդանանց ծնունդը:

Հավատի ու հայրենյաց համար մղված այս կռիվը մի փայլուն օրինակ է նաև այն բանի, թե ինչ է նշանակում խաչի, սրի ու գրչի, այսինքն հոգեվորականության, զինվորականության և մտավորականության միասնությունը: Այս եռամիասնության առջև, որի մարմնավորումն են Ղևոնդ երեցը, Քաջն Վարդանն ու Եղիշե պատմիչը, ընկրկում են ամենաահարկու ուժերը, անգոր եմ դառնում հավերժական թվացող կայսրությունները, նահանջում են արյունոտ թոնակալները:

Երբեք ու երբեք չէր լինի Վարդանանց սխրանքը, եթե չլիներ Հովսեփ կաթողիկոսի օրհնությունը, եթե չլիներ Ղևոնդյանք, որոնք ոգեշնչում էին

հայ գորականներին: Ղևոնդ երեցի ձեռքում հուրհրատող ամենագոր խաչն էր, որ առաջ էր մղում հայոց գնդերը:

Եկեք ևս մեկ անգամ լսենք ոսկեբերան Եղիշեին ու մեջբերենք նրա անմահ և հույժ այժմեական հնչող տողերը.

«Որոց ոգիքն թուլացեալ են յերկնաւոր առաքինութիւններէն, յոյժ ընդ ահիւ անկեալ է բնութիւն մարմնոյ. յամենայն հողմոյ շարժի յամենայն բանէ խռովի և յամենայն իրաց դողայ. երազագետ է այնպիսին ի կեանս իւրում: Որպէս և ասաց ոմն ի հնումն. Մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն է: Որ զմահ ոչ գիտէ, երկնչի ի մահուանէ. իսկ որ գիտէ զմահ, ոչ երկնչի ի մմանէ»:

Ահա և վերջին ու ամենակարևոր դասը, որ տալիս են մեզ Վարդանանք 1540 տարիների հեռուներից: Հիշենք նրանց, որ ընկան 451 թվականի մայիս 26-ին Ավարայրի մոտ, Ծավարշանի դաշտում, և թող լույս իջնի նրանց շիրիմներին:

«Յազգէն Մամիկոնէից քաջն Վարդան հարիւր երեսուն և երեք արամբբ. յազգէն Խորխոռունեաց Խորէնն կորովի իննետասն արամբբ. յազգէն Պալունեաց արին Արտակ յիսուն և եօթն արամբբ, յազգէն Գնթունեաց զարմանալին Տաճատ իննետասն արամբբ. յազգէն Դիմաքսենից իմաստունն Հմայեակ քսան և երկու արամբբ. յազգէն Գնունեաց մանուկն Վահան երիւք արամբբ. յազգէն Ընծայնոց արդարն Արսէն եօթն արամբբ. յազգէն Սրուանձտայ յառաջադէմն Գարեգին երկու հարազատօքն և ութուտասն արամբբ»:

Փառք Ղևոնդյանց և Վարդանանց մահատակներին»:

Բանախոսությունից հետո ճեմարանականները, Խ. Պալյանի ղեկավարությամբ, երգեցին Ս. Ներսես Ծնորհալու «Արեգակն արդարութեան» և «Երկնային Հրաիրակօք» շարականները, կատարեցին մահ Մ. Եկմալյանի «Լոեց»-ը (մեներգը՝ Գ լսարանի ուսանող Օնիկ Սողբաթյան), Կոմիտաս վարդապետի «Իմ հայրենյաց հոգի Վարդան», Մ. Եկմալյանի «Բլբուլն Ավարայրի», Գարեգին եպս. Սրվանձտյանի «Գողթնի քնարք» (մեներգը՝ Գ լսարանի ուսանող Հարություն Քեսապյան), Կոմիտասի «Ընկ Հայկազունք» և Մ. Եկմալյանի «Զեյթունցիների քայլերգը» ստեղծագործությունները:

Այս գեղեցիկ շարականների և ազգային-հայրենասիրական երգերի կատարումը համեմվում էր Եղիշեի «Վարդանի և Հայոց պատերազմի մասին» մատյանից ծաղկաքաղ արված համապատասխան հատվածների ընթերցումներով:

Հանդիսության վերջում Վեհափառ Հայրապետը իր գոհունակության և օրհնության խոսքը քաշխեց տոնակատարության կազմակերպիչներին և բոլոր ներկաներին.

ԷՒՎԱՐԴ ՍՐԿ. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ